

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅԱՆ և ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Դասվար՝Մանուկյան Նաիրա Դանիելի

Ղեկավար՝Շ. Սարգսյան

Սանկ. Գիտ. Թեկնածու. դոցենտ

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1: Ուղղագրության ուսուցման տեղը մայրենի լեզվի տարրական դասընթացում և ուսուցման արդյունավետ մեթոդները.....	4
1.1. Ուղղագրության ուսուցման ձևերն ու մեթոդները: Ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունն ու ուղղախոսությունը.....	7
1.2 Քերականական գիտելիքների օգնությամբ ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների հիմնավորումը.....	13
1.3 Ուղղագրական վարժություններ. դրանց արդյունավետությունն ու ուսուցման յուրահատկությունը.....	16
Գլուխ 2. Ուղղախոսության ուսուցման մեթոդներ. դրանց ընտրությունն ու արդյունավետության աստիճանը.....	24
2.1. Օրինակելի դասերի նմուշներ.....	29
Եզրակացություն.....	37
Օգտագործված գականության ցանկ.....	38

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի է, որ տարրական դպրոցում ուղղագրական և ուղղախոսական գիտելիքները, պայմանավորված դրանց յուրահատկությամբ և սովորողների տարիքային առանձնահատկությամբ, դժվարընկալելի են: Այդ իսկ պատճառով՝ չափազանց կարևոր է գտնել համապատասխան ուղիներ խնդրո առարկան առավել հիմնավոր ուսուցանելու և յուրացումը լիարժեքորեն ապահովելու համար: Այս աշխատանքում փորձել ենք ուսումնասիրել և քննարկել ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դպրոցում և գտնել առավել դասավանդման առավել արդյունավետ ուղիները:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է հանրակրթական ներկայիս պահանջներով, ըստ որի՝ ուղղագրությունը և ուղղախոսությունը տարրական դասընթացի կարևոր խնդիրներից են աշակերտի բանավոր խոսքի զարգացումը, լեզվական և մասնավորապես ձևաբանական գիտելիքներ ուսումնասիրելիս: Նկատենք, որ թե՛ ուղղագրության և ուղղախոսության, թե՛ քերականական գիտելիքների հիմքերը դրվում են հենց կրտսեր դպրոցական տարիքում: Այս աշխատանքը միտված է այդ նպատակի իրականացմանը:

Աշխատանքի նպատակը: Որոնել և ուսումնասիրել աշակերտների ուղղագրության և ուղղախոսության զարգացմանը նպաստող հնարներ և միջոցներ՝ առաջարկելով առավել արդյունավետները:

Աշխատանքի խնդիրները

1. Հետազոտությունը վերաբերող գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն,
2. Ուսուցման ընթացքում ուղղագրության և ուղղախոսությանը նպաստող միջոցների և ուղիների ուսումնասիրություն:
3. Ուղղագրության և ուղղախոսության զարգացմանը նպաստող մեթոդների և մեթոդական հնարների որոնում:

Աշխատանքի իրականացման համար կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ նկարագրական, զուգադրական, վերլուծական:

ԳԼՈՒԽ 1. Ուղղագրության ուսուցման տեղը մայրենի լեզվի տարրական դասընթացում, ուսուցման արդյունավետ մեթոդները

Ուղղագրության ուսուցումը երկակի նշանակություն ունի. մի կողմից այն կապվում է լսածը ճիշտ գրի առնելու կանոնների հետևողական կիրառության, իսկ մյուս կողմից՝ գրածը ճիշտ կարդալու, գրական արտասանության կամ ուղղախոսության ընդունված նորմաների ճիշտ պահպանման հետ¹: Այս առումով էլ ուղղագրության ուսուցումը, հասկապես տարրական դասարաններում, սերտորեն առնչվում է ուղղախոսության ուսուցման հետ և մեծ արդյունք կարող է տալ միայն այն դեպքում, երբ հետևողականորեն պահպանում են այդ գույքորդումները:

Ուղղագրական օրինաչափությունների ուսուցումը, ըստ էության, մեծապես նպաստում է ոչ միայն ճիշտ գրելու, այլև անսխալ կարդալու կարողության մշակմանը և հսկայական նշանակություն ունի մարդու լեզվական մշակույթի բարձրացման համար: Հայտնի է, որ ուղղագրական սխալները հաճախ ոչ միայն մթագնում կամ աղավաղում են բառիմաստը, այլև փոխում նախադասության միտքը կամ երկրնտրանքի ու կասկածի տեղիք տալիս:

Նման շփոթումներից խուսափելու համար հենց առաջին դասարանից սկսած որոշակի աշխատանք պետք է տանել աշակերտների մեջ անհրաժեշտ ուղղագրական կարողություններ մշակելու ուղղությամբ: Դրա համար երեխաներից ոչ միայն մտավոր լուրջ գործունեություն է պահանջվում, այլև լսողության, տեսողության, խոսելու օրգանների և ձեռքի մկանային համակարգի զարգացման նպատակով տարվող վարժությունների կատարման համեմատաբար ու հետևողական աշխատանք, որովհետև միայն այդ բոլորը համատեղ վերցված կարող են նպաստել բառի գրության մտապահմանը:

Երկրորդ դասարանում աշակերտները զուգահեռ դասընթացին ուսումնասիրում են նաև ձայնավորների, բաղաձայնների և երկհնչյունների ուղղագրությունը և ուղղախոսությունը: Որպեսզի նրանց մոտ ավելի տպավորիչ լինի որոշ բառերի գրությունը, օրինակ՝ ե(յէ) տառի ուղղագրության և ուղղախոսության

¹ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

ուսումնասիրության ընթացքում կարող ենք օգտագործել հետևյալ հնարը: Ջրոսանք պատկերասրահում մեթոդի օգնությամբ դասարանում դրվում են մի քանի նկարներ և առարկաներ, որոնց գրության ժամանակ հանդիպում ենք ե(յէ) տառը տարբեր դիրքերում: Այդ առարկաները կարող են լինել. եղնիկ, ելակ, սեղան(խաղալիքներ), տետր, նկարներում նույնպես կլինեն այդպիսի պատկերներ: Աշակերտներից մի քանիսը կշրջեն, կշոշափեն իրերը, կդիտեն նկարները, ապա կասեն անունները և կգրեն դրանք գրատախտակին: Այսպես՝ կկրկնեն բառերի արտասանության և գրության՝ իրենց կողմից ընկալված առանձնահատկությունները.

- բառասկզբում լսվում է *յէ*, գրվում է *է*, բացառություն են կազմում *եւ, ես, ենք, էք, են* օժանդակ բայերը,
- բառամիջում լսվում է *է*, գրվում է *ե(յէ)*:

Այս ամենը կատարելուց հետո կստանան առաջադրանք տեքստից դուրս գրել այն բառերում, որոնցում *ե*-ն լինի բառասկզբում, բառամիջում և բառավերջում¹:

Մայրենի լեզվի տարրական դասընթացում ուղղագրության ուսուցման առանձին բաժին չկա, սակայն ուղղագրության ուսուցումը կազմում է այդ դասընթացի հիմնական խնդիրներից մեկը, քանի որ առանց ուղղագրության և ուղղախոսության տարրական գիտելիքների դժվար է պատկերացնել կարդալու և գրելու, քանավոր և գրավոր խոսքի ուսուցումը:

Հայերենի ուղղագրության մեջ տարբերակվում են մի քանի բաժիններ².

1. Ճայնավորների ուղղագրություն, որի մեջ մտնում են *օ(n)*, *է(ե)*, *ը* ձայնավորների ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, *ռ*, *է*, երկհնչյունը, և եռահնչյուն և երկհնչյուն տառերի ուղղագրությունը բառասկզբում և բառամիջում, *ը*-ի և *ւ*-ի ուղղագրությունը ստղադարձի ժամանակ:

2. Երկհնչյունների ուղղագրություն, որի մեջ մտնում են *յա, յու, յո, յե, յի* և *այ, ույ, ոյ, էյ* երկհնչյունների, այսինքն՝ *յ* կիսաձայնի և *ա, օ, ու, ի, է* ձայնավորների կապակցությունների ուղղագրությունը:

Տարրական դասարաններում այս ուղղագրությունն առանձին բաժնով չի ուսումնասիրվում, նրա առանձին տարրեր ձուլվում են ձայնավորների

¹ Մարգարյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՆ», 2010, էջ 7:

² Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 518:

ուղղագրության հետ: Ձայնավորների ուղղագրության մեջ է մտնում նաև *յ* ձայնակապի և նրա գործածության ու տողադարձի հետ կապված ուղղագրական դեպքերի ուսուցումը:

3. Բաղաձայնների ուղղագրություն, որի մեջ մտնում է երկաստիճան և եռաստիճան այն բաղաձայնների ուղղագրությունը, որոնք իրենց տեղերը փոխում են արտասանությամբ շատ նման իրենց համապատասխան գույգերի հետ (բ-փ, գ-ք, դ-թ, ձ-ց, ջ-չ, դ- խ, հ)և որոնց ուսուցումը մեծապես կապվում է նաև ուղղախոսության հետ:

4. Քերականական ուղղագրություն, որի մեջ մտնում են խոսքի ձևաբանական և շարահյուսական միավորների ուղղագրական օրինաչափությունները՝ մեծատառը բառասկզբում և նախադասության սկզբում, ուրիշի խոսքի գրությունը, գոյականների հոգնակիի կազմության առանձին դեպքերը, օժանդակ բայի գրությունը և շատ այլ դեպքեր, որոնք քերականական հիմնավորում ունեն: Քերականական ուղղագրության մեջ է մտնում նաև տողադարձը:

Տարրական դասարաններում ուղղագրության ուսուցումը, ըստ էության, միաձուլվում է մայրենի լեզվի ամբողջ դասընթացի հետ և ամբողջ ուսումնառության ընթացքում մատուցվում է փոքրիկ բաժիններով, որոնք տրվում են որոշակի ընդմիջումներով, որպեսզի հնարավոր լինի այդ ընթացքում ուսուցված կանոնը լրիվ յուրացնել տալ: Այս առումով ուղղագրության ուսուցումն իսկապես բազմաթիվ թելերով միահյուսվում է լեզվի ուսուցման ուղղությամբ տարվող մյուս բոլոր աշխատանքների հետ՝ որպես դրանց բաղկացուցիչ մաս:

1.1 Ուղղագրության ուսուցման ձևերն ու մեթոդները:
Չայնավորների և բաղաձայնների ուղղագրությունն ու
ուղղախոսությունը

Մեթոդական գրականության մեջ տարբերակվում են ուղղագրության ուսուցման մի քանի ձևեր, որոնք սկզբունքորեն տարբերվում են միմյանցից¹:

ա) *Ընդօրինակման մեթոդ*, որի հիմնադիրը եղել է Լայր, փորձառական մանկավարժության նշանավոր ներկայացուցիչներից մեկը: Ըստ այդ մեթոդի կողմակիցների ուղղագրության ուսուցման համար ամենանպատակահարմար եղանակը միշտ գրված ձևերի կամ բառապատկերների ընդօրինակումն է: Հենց այդ նպատակով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ բացառիկ տեղ էին տալիս *ընդօրինակմանը* կամ *արտագրություններին*:

բ) *Հնչյունային մեթոդ*, որի կողմակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին երեխայի հնչյունային լսողության ճիշտ զարգացումը, որովհետև մարդ կյանքում ավելի շատ լսելով է գրում, քան տեսնելով, որը նույնիսկ ինքնուրույն գրելու ժամանակ էլ փաստորեն առկա է որպես ներքին խոսքը ինքնաթելադրությամբ, այսինքն՝ ներքին լսողությամբ գրելու գործողություն: Այդ նկատառումով էլ նրանք ուղղագրության ուսուցման մեջ հիմնական տեղը հատկացնում էին *թելադրություններին*:

գ) *Կանոնարկման մեթոդ*, որի կողմակիցները ուղղագրության ուսուցման մեջ ամենահիմնականը համարում էին ուղղագրական օրինաչափությունների հաստատումը և դրանց համապատասխան կանոնների սերտումը, այլ կերպ ասած՝ գտնում էին, որ այդ գործում մեկ ընդհանրացնող կանոնի յուրացումն ավելի շատ բան կարող է տալ երեխային, քան տասնյակ ու հարյուրավոր առանձին բառերի ընդօրինակումը կամ լեզվական փաստերի մտապահումը:

Այս մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր առավելություններն ու թերությունները, ուստի դրանցից որևէ մեկին բացարձակ նախապատվություն տալը կամ որպես համընդհանուր մեթոդ առաջադրելը սխալ կլիներ: Սակայն ուղղագրության առանձին բաժինների ուսուցման համար դրանցից որևէ մեկը կարող

¹ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 519:

է ավելի մեծ նախադրյալներ ունենալ, քան մյուսը, ուստի այդ մեթոդները չպետք է համադրել միմյանց, այլ՝ ընդհակառակն, պետք է կարողանալ դրանք համադրել՝ խելացի կերպով օգտագործելով դրանցից յուրաքանչյուրի առանձին առավելությունները:

Այս ամենը նկատի ունենալով ուսուցիչների կողմից հաճախ հանձնարարվում են թելադրություններ առաջադրանքներով: Այստեղ պահպանվում է երեք կանոնների կիրառությունները: Օրինակ. նախքան թելադրությունը սկսելը աշակերտները կրկնեն օ-ի և ո-ի գրության հիմնական կանոնները.

- ✓ բառասկզբում լսվում է օ, գրվում է օ,
- ✓ բառասկզբում լսվում է ո, գրվում է ո,
- ✓ բառամիջում լսվում է օ, գրվում է ո,
- ✓ բառամիջում լսվող օ-ն գրվում է օ, եթե ածանցման և բառաբարդման հետևանք է, այսինքն՝ ավելացել են ածանցներ կամ կազմվել նոր բառեր:

Այս ամենը կրկնելուց հետո աշակերտները գրում են թելադրություն, որը իր մեջ ներառում է օ և ո հնչյուններով բառեր: Թելադրությունն ավարտելուց հետո ուսուցիչ կողմից ստանում են առաջադրանքներ.

1. Դուրս գրե՛լ օ-ով և ո-ով սկսվող բառեր և դրանցով կազմե՛լ նոր բառեր:
2. Դրանցով կազմե՛լ բառակապակցություններ:
3. Բառակապակցությունները գործածի՛ր նախադասությունների մեջ:

Ձայնավորների ուղղագրություն: Հայերենի ուղղագրության հիմնական բաժիններից մեկը ձայնավորների ուղղագրությունն է, որի ուսուցումն սկսվում է դեռևս գրաձանաչության շրջանում կամ նրա ուսուցմանը զուգընթաց, սակայն որոշակի գիտական հիմք է ստանում ետայբբենական շրջանում, երբ անցնում ենք հնչյունաբանության տարրական դասընթացի ուսումնասիրությանը, և ավարտվում է երկրորդ դասարանում, երբ ամփոփվում է բառակազմության ուսուցումը:

Ձայնավորների ուղղագրությունը բաժանվում է երկու մասի՝ *ձայնավորների ուղղագրությունը բառասկզբում*, որի ուսուցումն իրականացվում է առաջին դասարանում, սակայն կրկնվում ու խորացվում է նաև երկրորդ դասարանում, և *ձայնավորների ուղղագրությունը բառամիջում* կամ *բարդության ու ածանցման*

ժամանակ, որն իրականացվում է երկրորդ դասարանում, սակայն առանձին բառերի գրության ուսուցան ձևով կրկնվում ու ամրապնդվում է հետագա ամբողջ տարրական ուսուցման ընթացքում:

Հայերենի *ա, ի, ու* ձայնավոր հնչյունների գրությունն ու արտասանությունը համապատասխանում են և որևէ դժվարություն չեն ներկայացնում: Օր.՝ *տարի, սիրելի, քաղաք, գարուն, գինի, պուրակ, ուրախ* և այլն:

Գրության և արտասանության անհամապատասխանություն կա *է(ե), օ(ո), ը* ձայնավոր հնչյունների հետ կապված:

Բառակազմում ձայնավորի ուղղագրության ուսուցումը կատարվում է գույգերով՝ *է-է*-ի ուղղագրություն, *օ-ո*-ի ուղղագրություն, *ը*-ն բառակազմում, բառամիջում և բառավերջում, *է-ը* բառակազմում, բառամիջում և բառավերջում կամ առանձին գործածվելիս, որպեսզի հնարավոր լինի անհրաժեշտ համեմատություններ և հակադրություններ անցկացնել՝ մտապահումն ավելի հեշտացնելու համար:

Ուղղագրական այս օրինաչափությունների ուսումնասիրությունն սկսվում է լեզվական փաստերի դիտումից, որն սկզբունքային տեսակետից նոր բան չէ երեխաների համար, արդեն ծանոթ ու հասկանալի է դեռևս գրաճանաչության շրջանից: Հենց դա էլ հիմք է տալիս ուսուցումն սկսել ոչ թե երևույթի բացատրությունից, այլ փաստերի ինքնուրույն դիտումից, որին հաջորդում է ուսուցչի ղեկավարությամբ կատարվող պարզ վերլուծությունն ու կրկնվող միանման դեպքերից հանվող ընդհանրացումը: Այս ընդհանրացումն էլ հենց հիմք է դառնում ուղղագրական կանոնի բխեցման համար, որը անպայման պետք է կատարել աշակերտների միջոցով: Օրինակ՝ երկրորդ դասարանում մոտ չորս դասաժամ հատկացվում է *օ* և *ո* հնչյուն-տառի ուղղագրության և ուղղախոսության ուսուցմանը¹: Ուսումնական նյութի ուսումնասիրումից հետո, աշակերտները ինքնուրույն սահմանում են հիմնական կանոնները.

- բառակազմում լսվում է *օ*, գրվում է *օ*,
- բառակազմում լսվում է *ո*, գրվում է *ո*,
- բառամիջում լսվում է *օ* և հիմնականում գրվում է *ո*,

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ», 2010, էջ 8-11:

- Բառամիջում լավող օ-ն գրվում է օ, եթե ածանցման և բառաբարդման հետևանք է, այսինքն՝ ավելացել են ածանցներ կամ կազմվել նոր բառեր:

Բառամիջում ձայնավորների ուղղագրության ուսուցումը կատարվում է երկրորդ դասարանում՝ կապված բառերի բարդման և ածանցման երևույթի ուսումնասիրության հետ: Այդ կանոնի ուսուցումը հիմնականում առնչվում է բաղադրյալ բառերի մեջ որպես երկրորդ կամ երրորդ բաղադրիչ հանդես եկող ձայնավորով սկսվող բառերի գործածության հետ: Հենց այդ առումով էլ ուղղագրական նոր կանոնի ուսուցումն սկսվում է բառասկզբում ձայնավորների ուղղագրության վերաբերյալ սովորած առաջին կանոնի վերհիշումով, ամրապնդումով ու խորացումով:

Ուղղագրական նոր օրինաչափության ուսուցումն այստեղ ևս սկսվում է լեզվական փաստերի դիտումով և ավարտվում կանոնի բխեցումով: Այդ կանոնի յուրացման շուրջ կատարվում են ամրապնդման, մարզողական, լեզվական ու կիրառական բազմաթիվ գրավոր վարժություններ՝ իհարկե բառապաշարի ավելի լայն ընդգրկումով, քան մինչ այդ է կատարվել: Ուսուցումը հիմնականում կատարվում է ըստ կանոնների, սակայն դրանց միջև համեմատությունների ու հակադրությունների անցկացումը չի բացառվում, չնայած այս դեպքում դա համեմատաբար քիչ բան կարող է տալ, քան առաջին օրինաչափության ուսուցման ժամանակ է տալիս: Օրինակ՝ ելնելով վերը բերված օ և ո հնչյուն տառերի աշակերտների կողմից բխեցված կանոններից կարելի է հանձնարարել նմանատիպ առաջադրանքներ.

1. Տեքստից դուրս գրե՛լ այն բառերը, որոնցում կա օ և ո տառերը:
2. Լրացրու՛ բաց թողնված տառերը՝ օ կամ ո:
3. Դուրս գրե՛լ այն բառերը, որոնցում լավում է օ, բայց գրվում է ո:

Այսպես յուրաքանչյուր դասի ընթացքում կարելի է բարդացնել առաջադրանքների պահանջը:

Այսպիսով, ձայնավորների ուղղագրության ուսուցումը հիմնականում տարվում է կանոններով, որոնք և նպաստում են ուղղագրական կարողությունների ու հմտությունների հեշտ ձևավորմանը: Իսկ «ուղղագրական կարողությունը» բարդ կարողություն է: Այն իր մեջ ներառում է գրելու կարողություն, բառի հնչյունային

կազմի վերլուծության երևույթի ճանաչումը, նրա նկատմամբ անհրաժեշտ կանոնի կիրառումը և, ի վերջո, ուղղագրական արժեք ներկայացնող բառի ճիշտ գրությունը:

Բաղաձայնների ուղղագրություն: Տարրական դասարանների հայոց լեզվի ծրագրով բաղաձայնների ուղղագրության կանոնարկված ուսուցման պահանջ չկա, սակայն առանց այդ ուղղագրության մասին գաղափար տալու անհնարին է պատկերացնել ճիշտ կարդալու և գրելու ուսուցումը: Ի տարբերություն ձայնավորների ուղղագրության ուսուցման, բաղաձայնների ուղղագրության ուսուցումը տարվում է ընդօրինակման մեթոդով:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ուսուցիչները գիտակցորեն խուսափում են գրությամբ և արտասանությամբ տարբերվող բառերի օգտագործումից, որպեսզի ուսուցանվող հնչյունների և դրանց տառերի միջև նոր-նոր ձևավորվող զուգորդումները կայունանա: Մակայն հետագայում ընթերցվող բնագրերում ավելի ու ավելի հաճախակի են հանդիպում այնպիսի բառերն որոնց մեջ որոշակի դիրքերում պայթական ձայնեղները կարդացվում են կամ հնչում են որպես շնչեղ-խուլ բաղաձայններ: Հենց այդ ժամանակից էլ ծագում է նաև այդ կարգի բառերի ճիշտ գրության ուսուցման հարցը: Սկզբում երեխաներին սովորեցնում ենք կարդալ այնօես, ինչպես խոսում ենք՝ գրությամբ ու արտասանությամբ տարբերվող բառերի արտասանությունը գրային ձևից խոսակցականին նմանեցնելով: Մակայն դրանով մենք երեխաներին գաղափար ենք տալիս լեզվական նոր երևույթի մասին, որ մինչ այդ միանգամայն անսովոր է եղել նրանց համար:

Այս նոր հասկացությունն անպայման պետք է տեսականորեն հիմնավորել: Հնչյունաբանությունն ուսումնասիրելիս երեխաներին գաղաձար է տրվում բաղաձայնների միաստիճան, երկաստիճան և եռաստիճան լինելու մասին, միևնույն խմբի մեջ մտնող բաղաձայնների հնչերանգային նմանությունների և առանձին բառերի մեջ դրանց տեղափոխության մասին, որոնց անտեսումը որոշակի սխալների տեղիք կարող է տալ: Մակայն այս ամենը բավարար չի կարող լինել ճիշտ կարդալու և գրելու ուսուցման համար, ուստի այն հետևողականորեն ամրապնդվում է այդ ընդհանուր դրույթը հաստատող առանձին բառերի գրության ուսուցման գործնական վարժություններով: Դրա համար էլ ըստ առանձին դասարանների ծրագրերով նախատեսված են բաղաձայնների ուղղագրությանը վերաբերող բառերի

բառացանկեր, որոնց ուսուցումը պետք է իրականացվի ամբողջ ուսումնական տարվա, ինչպես նաև ամբողջ տարրական ուսուցման ընթացքում:

Այս բառերի ուսուցումն իրականացվում է գործնական ճանապարհով, առանց կանոնարկման կամ ուղղագրական առանձին սահմանումների առաջադրման: Այս բառերը հիմնականում տեսնում ենք դասագրքերի վերջին էջերին, որոնց ուսուցման նպատակով և կարելի հանձնարարել որոշ առաջադրանքներ, երբեմն նաև բառային թելադրություններ: Օրինակ՝ *հնգյակ* մեթոդի միջոցով աշակերտները ստանում են հանձնարարություն. *Տարօրինակ, ծաղկագարդ, անշնորհք, այսօր* բառերը (վերցված են դասագրքից¹):

- ✓ ենթարկել՝ և բառակազմական վերլուծության,
- ✓ կազմել՝ նոր բառեր արմատներով,
- ✓ առանձնացնել՝ ըստ խոսքիմասային պատկանելիության,
- ✓ կազմել՝ բառակապակցություններ,
- ✓ գործածել՝ նախադասություններում:

Բաղաձայնների ուղղագրության ուսուցման համար կարևոր նշանակություն կարող է ունենալ նաև ուղղագրական պլակատների օգտագործումը՝ հատկապես ամփոփիչ պարապմունքների կամ կրկնությունների ժամանակ, երբ արդեն հնարավորություն է ստեղծվում այս կամ այն ուղղագրության վերաբերյալ սովորած բառերի բառաշարքեր կազմելու և ընդհանրացումներ անելու:

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխչյան Կ., «Մայրենի 4», Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրք, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2009, էջ 172-173:

1.2 Քերականական գիտելիքների օգնությամբ ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների հիմնավորումը

Հայերենի ուղղագրության մի զգալի մասն էլ զուտ քերականական հիմք ունի և առանց քերականական հիմնական օրինաչափությունները բացատրելու, հնարավոր չէ դրանց ուսուցումն ապահովել: Ուղղագրության այս բաժնի ուսուցումն սկսվում է դեռևս գրաճանաչության շրջանում և շարունակվում մինչև ոչ միայն տարրական, այլև համակարգված դասընթացի ուսուցման ավարտը:

Դեռևս գրաճանաչության շրջանում երեխաներին սովորեցնում ենք, որ մարդկանց անուններն ու ազգանունները, գյուղերի ու քաղաքների, լեռների և լճերի... անունները գրվում են մեծատառով: Այս ժամանակ երեխաները տեղեկություններ են ստանում նախադասության, վերնագրի, ոտանավորի ամեն մի տողը մեծատառով սկսելու մասին: Սակայն այդ կանոնների հիմնավոր ուսուցումը կատարվում է երկրորդ և երրորդ դասարաններում, երբ երեխաներն սկսում են քերականական տարրակա դասընթացի ուսումնասիրությունը:

«Նախադասություն» թեման ուսումնասիրելիս անհրաժեշտ տեղեկություններ են ստանում նախադասությունը մեծատառով սկսելու մասին և քերականորեն հիմնավորում ու պատճառաբանում են այդ: Այս հիմքով է կատարվում նաև ուրիշի խոսքի ուղղագրության ուսուցումը:

Այս բաժնում առաջադրանքները լինում են հիմնականում թելադրությունների, ինչպես նաև ընդօրինակման արտագրությունների տեսքով: Թելադրությունը գրելիս հաճախակի աշակերտները կրկնում են՝ *«Սկսում ենք մեկ մատ խորքից՝ մեծատառով, իսկ վերջում դնում ենք վերջակետ»:*

Ուրիշի ուղղակի խոսքի ուղղագրական կանոնների ուսուցման նկատառումներից ելնելով, հաճախակի պետք է հանձնարարել նաև արտագրություններ, որոնք կարող են ունենալ նմանատիպ պահանջ՝ Տեքստից ուրս գրե՛լ ուրիշի ուղղակի խոսք պարունակող նախադասությունները: Առաջադրանքը կատարելուց հետո աշակերտների ուշադրությունը հրավիրում ենք ուրիշի ուղղակի խոսքի ուղղագրական կարևոր կանոնների վրա:

- սկսում ենք նոր տողից, գծիկով և մեծատառով,
- հեղինակի խոսքից անջատում ենք ոտրակետ գծիկով կամ վերջակետ գծիկով:

Տարրական դասարաններում այսքանի իմացությունը բավարար է;

«Գոյական անուն» թեման անցնելիս երեխաները հիմնավոր կերպով ուսումնասիրում են հատուկ անունների ուղղագրությունը, տեղեկություններ են ստանում հոգնակի թվի կազմության և այդ կապակցությամբ կրկնակ ն-ի գրության ու արտասանության, որոշ միավանկ բառերի հոգնակի թվում հանդես եկող ն-ի, ինչպես նաև ստացական հոդ ստացած գոյականների ուղղագրության մասին:

Այս բաժնում առաջադրանքները կարող են լինել թելադրությունների, ինչպես նաև բաց թողնված տառերը լրացնելու տեսքով:

«Բայ» թեման անցնելիս անհրաժեշտ հիմնավորում է ստանում մինչ այդ արդեն գործնական կերպով ուսուցված օժանդակ բայի ներկայի և անցյալի ձևերի ուղղագրությունը՝ թե՛ գրության ու արտասանության տարբերությունների և թե՛ առանձին գրվելու առումով:

Աշակերտները հիմնականում վերհիշում են անցած կանոնները է-ի, ե-ի ուղղագրության և ուղղախոսության վերաբերյալ, որը մանրամասն արդեն ուսումնասիրվել է մեր կողմից: Առաջադրանքները հիմնականում լինում են թելադրությունների տեսքով, մինչ բայ թեման ուսումնասիրելը, իսկ չորրորդ դասարանում բաց թողնված բայերը լրացնում են ճիշտ դեմքով, թվով, ժամանակով կամ որոշում են նախապես տրված բայի դեմքը, թիվը և ժամանակը:

«Թվական անուն» թեման անցնելիս երեխաները տեսական գիտելիքներ են ստանում քանակական ու դասական թվականների ուղղագրության վերաբերյալ, որը հիմք է դառնում մինչ այդ արդեն գործնական կերպով սովորած ուղղագրական օրինաչափությունների վերազնահատման, հիմնավորման ու համակարգման համար:

Ուղղագրության այս բաժնի ուսուցումն անհամեմատ ավելի դյուրին է, որովհետև անհրաժեշտ չափով հիմնավորված ու պատճառաբանված է: Սակայն այստեղ ևս ուղղագրական վարժությունները որոշակի դեր ունեն:

Աշակերտները ստանում են նմանատիպ առաջադրանքներ.

- ❖ Խմբավորի՝ ը տրված թվականները ըստ տեսակների:
- ❖ Տրված թվերը գրի՝ ը տառերով:
- ❖ Բառացանկից կամ տեքստից առանձնացրու՝ թվականները:

1.3 Ուղղագրական վարժություններ. դրանց արդյունավետությունն ու ուսուցման յուրահաստկությունը

Ուղղագրական վարժությունները իրենց հիմքով կարող են և պետք է որ նման լինեն քերականական վարժություններին, որովհետև այստեղ ևս վարժությունների նպատակը և խնդիրը գրեթե նույնն է; Սակայն, ի տարբերություն քերականական վարժությունների, այստեղ վարժություններն իրենց կատարման հիմքով գերազանցապես ինքնուրույն են:

Ուղղագրական վարժությունները կարող են լինել չորս տեսակ՝ *նախապատրաստական, մարզողական, վերլուծական և կիրառական*¹, որոնցից յուրաքանչյուրը դրսևորման իր տարբեր ձևերը կարող է ունենալ:

Ուղղագրության ուսուցման համար շատ արդյունավետ են ուղղագրական բառագրքույկներով տարվող աշխատանքները՝ համապատասխան բառերը գտնելու և խմբավորելու, տառ բաց թողնված բառերը լրացնելու կամ վերականգնելու, բառաշարքեր կազմելու, ուսուցչի ստուգած, բայց չուղղված բառերի ճիշտ ձևերը գտնելու և համանման այլ հանձնարարություններով: Դպրոցում լայնորեն կիրառվում է առաջին դասարանից սկսած ուղղագրական բառատետր պահելը, որը մարզողական վարժությունների ձևերից մեկն է և մեծ արդյունք է տալիս ոչ միայն ուղղագրական արժեք ունեցող բառերը շրջանառության մեջ պահելու, այլև երեխաների մեջ ինքնուրույն աշխատանքի կարողություններ մշակելու տեսակետից: Այդ բառերը մեծ մասամբ երեխաները իրենք են գտնում ընթերցվող նյութերից կամ վարժության բնագրերից և ուսուցչի թույլտվությամբ գրանցում բառատետրում:

Այժմ շատ հանձնարարելի է համարվում անհատական քարտերի օգտագործումը: Ի թիվս տրամաբանական, քերականական ու ոճական քարտերի, կարող են լինել ուղղագրական բնույթի քարտեր, որոնք իրենց ընդգրկման ծավալով ու դժվարությամբ կարող են համապատասխանել աշակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակին:

Մեթոդիստներն ավանդաբար ուղղագրական կարողությունների մշակմանը նպատակաուղղված վարժությունների երեք տեսակ են նշում՝ ***արտագրություն, թելադրություն և փոխադրություն***¹:

¹ Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան 1980, էջ 520:

Արտագրություն: Տարրական բոլոր դասարաններում օգտագործվում են արտագրություններն՝ իրենց տարատեսակներով՝ ընդօրինակման և ստեղծագործական: Ընդունված են արտագրություններ ինչպես դասագրքից և գրատախտակից, այնպես էլ ձեռագիր տեքստից:

Սովորաբար արտագրելու ուղղությամբ հանձնարարություններ տրվում են առաջին դասարանի գրաճանաչության շրջանից: Արտագրելու առաջադրանքը կրտսեր դպրոցականի համար բավականին բարդ հանձնարարություն է, այն կատարելու համար աշակերտը պիտի իրականացնի մի քանի մտավոր գործողություն կարդա բնագիրը, այն հասկանա, իմաստավորի, արտագրի պահպանելով ինչպես ուղղագրական, այնպես էլ վայելչագրական կանոնները: Արտագրությունը մեխանիկական աշխատանք չէ, ինչպես հաճախ կարծում են ոմանք:

Հասկանալով արտագրելու համար ուսուցիչը նախապատրաստական աշխատանք պետք է տանի, որ աշակերտները կարդան նյութը հասկանալով նրա իմաստը, արտագրվելիք նյութը բաժանեն տրամաբանական հատվածների և արտագրել սովորեն նախ բառերով, ապա՝ (աստիճանաբար) բառակապակցություններով (տրամաբանորեն իրար հետ կապված բառերով): Այս ընթացքում աշակերտներին պետք է սովորեցնել կարդալ արտագրվելիք նյութը հատվածաբար և շշուկով ինքն իրեն թելադրելով գրել:

Արտագրությունները լինում են՝ **ընդօրինակման և ստեղծագործական²:**

ա) **Ընդօրինակման արտագրության** համար ընտրվում են ինչպես գրությամբ և արտասանությամբ համապատասխանող բառեր, այնպես էլ բառակապակցություններ, պարզ ընդարձակ նախադասություններ, մտքով իրար հետ կապված պարզ նախադասություններ, չափածո տողեր և այլ նյութեր, որոնց ծավալը դասարանից դասարան աստիճանաբար ընդարձակվում է: Այդ նյութերի մեջ պիտի տեղ տրվի երկհնչյուն և եռահնչյուն տառերին, ինչպես նաև օ-ի և ը-ի

¹ Գյուլամիրյան Ջ. Հ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ, Եր., «Զանգակ-97», 2003, էջ 5:

² Շիրինյան Հ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Դասախոսությունների փաթեթ, Երևան, 2015, էջ 54:

ուղղագրությանը՝ նկատի ունենալով, որ երեխաները, բնականաբար, դժվարանում են դրանց ճիշտ գրության մեջ:

Ընդօրինակման աշխատանքներն իրականացնելիս պետք է նկատի ունենալ, որ արտագրության համար գրատախտակին գրված կամ դասագրքում տրված նյութն աշակերտները ոչ միայն պիտի բարձրաձայն կարդան, պարզաբանեն անհրաժեշտ բառերի ուղղագրությունը և կետադրությունը, այլև ուսուցիչը պիտի բացատրի, թե ինչպես պիտի երեխաներն արտագրեն: Երեխաները պիտի կրկնեն այն կանոնները, որոնց շուրջ տրվում է արտագրությունը: Այնուհետև նյութը 2-3 աշակերտ պիտի ընթերցեն, նոր միայն անցնեն արտագրության:

բ) *Ստեղծագործական արտագրություններն* իրականացվում են անցած ուղղագրական, լեզվական կանոնների կրկնության և ամրակայման նպատակով՝ աշխատանքին տալով տրամաբանական, ստեղծագործական ուղղվածություն: Այս դեպքում արտագրությունն առավել զարգացնող է և հետաքրքիր, միօրինակ արտագրությունը կարող է ձանձրացնել երեխաներին, իսկ լրացուցիչ՝ ստեղծագործական-որոնողական տարրեր պարունակող առաջադրանքը ոչ միայն հետաքրքրություն կառաջացնի, և երեխան այն կկատարի հաճույքով, այլև կնպաստի նրա մտածողության զարգացմանը:

Թելադրություն: Մարդու գրագիտության չափանիշներից մեկը անսխալ թելադրություն գրելու հմտությունն է: Թելադրությամբ որևէ նյութ գրելու կարողության ձևավորումն սկսվում է դեռևս առաջին դասարանից գրաճանաչության շրջանից, այնուհետև այդ կարողությունը աստիճանաբար կատարելագործվում է, զարգանում: Հիսուն-վաթսունական թվականներին որոշ մեթոդիստներ տարբերակում էին թելադրությունների շուրջ 12 տեսակ, որոնք հետագայում համարվեցին ձևական, ոչ գործադրելի: Ըստ էության այդ տարատեսակների միջև էական տարբերություն չկար: Այնուհետև մեթոդական գրականության մեջ, ըստ անցկացման բովանդակության, ընդունվեցին երկու խմբի թելադրություններ՝ **սովորական** և **ստեղծագործական**, իսկ ըստ անցկացման նպատակի **բացատրական** և **ստուգողական**¹:

¹ Շիրինյան Հ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Դասախոսությունների փաթեթ, Երևան, 2015, էջ 55:

I. Սովորական թելադրություններ (սրանք, ըստ էության, ուսուցողական (բացատրական) թելադրություններ են) անցկացնելու նպատակը երեխաներին թելադրված նյութն անսխալ գրի առնել սովորեցնելն է, որի միջոցով աշակերտների մեջ աստիճանաբար ձևավորվում է լսածը գրագետ գրի առնելու ունակություն:

Տարրական դպրոցում կիրառելի է սովորական թելադրությունների 3 տեսակ ***հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրություն¹***:

Հնչյունային թելադրությունը ուղղագրական այնպիսի վարժություն է, որի ժամանակ աշակերտները ուսուցման առաջին փուլում ուսուցչի օգնությամբ (բարձրաձայն), այնուհետև՝ ինքնուրույն (մտքում) հնչյունային վերլուծության են ենթարկում բառը, ապա կատարում են համադրում, որը գրելու և կարդալու հիմքն է: Այս ընթացքում երեխաները գրի են առնում ուսուցչի թելադրած նյութը առաջնորդվելով վայելչագրական և ուղղագրական կանոններով:

Թելադրության համար առաջադրվում են նախ բառեր (գրությամբ և արտասանությամբ չտարբերվող), ապա՝ բառակապակցություններ, հետո պարզ ընդարձակ նախադասություններ, այնուհետև մտքով իրար հետ կապված նախադասություններ և կապակցված խոսք (բնագիր):

Դասարանից դասարան թելադրության համար առաջադրվող նյութը բարդանում է: Թելադրության այս տեսակի արդյունավետությունը բարձր կլինի միայն մանրակրկիտ վերլուծական աշխատանք կատարելուց հետո:

Նախազգուշական թելադրությունների ժամանակ ուղղագրական մեկնաբանություններ են կատարվում մինչև թելադրություն գրելը: Չնայած թելադրության այս տեսակը կիրառելի է տարրական բոլոր դասարաններում, սակայն յուրաքանչյուր մասնավոր դեպքում այն որոշակի նպատակ ունի: Նախազգուշական թելադրության հիմնական մեթոդական առանձնահատկությունը սխալների կանխումն է, որն իրականացվում է ուսուցողական-բացատրական ուղիներով: Շահեկան է նաև թելադրվելիք նյութը գրատախտակին գրելը (որպեսզի աշակերտները ոչ միայն լսեն տեքստը, այլև կարդան): Թելադրությունը գրելիս կարելի է գրատախտակը մաքրել կամ ծածկել վարագույրով:

¹ Շիրինյան Հ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Դասախոսությունների փաթեթ, Երևան, 2015, էջ 55:

Այս դեպքում ևս ուսուցիչը ոչ թե պատրաստի գիտելիքներ պիտի հաղորդի հիշեցնելով կամ բացատրելով այս կամ այն կանոնն ու սահմանումը, որին նվիրված է նյութը, այլ այն պիտի վերհիշեն, իմաստավորեն և վերարտադրեն աշակերտները: Այդ նպատակով թելադրվելիք նյութի այն բառերը, որոնք ուսուցչի կարծիքով դժվարություն կներկայացնեն աշակերտների համար, պիտի գրվեն գրատախտակին, որպեսզի ամբողջ դասարանը կարողանա աշխատել (միաժամանակ դիտել, կարդալ, ուսումնասիրել):

Նախ առաջարկվում է նյութը լուր կարդալ, ապա մի քանի աշակերտ կարդում են բարձրաձայն, այնուհետև իրականացվում է բացատրական աշխատանք, տրվում են մեկնաբանություններ (պատահական չէ, որ թելադրության այս տեսակը երբեմն մեթոդիստները անվանում են բացատրական կամ մեկնողական թելադրություն): Երբ նյութն անհրաժեշտ չափով յուրացված է, պիտի ծածկել գրատախտակը (կամ մաքրել) և սկսել թելադրությունը երբեմն հիշեցնելով որոշ կանոններ:

Ինքնաթելադրությունն, ըստ էության, նախագգուշական թելադրության մի տարբերակ է, որը, սակայն, աշակերտը գրում է ոչ թե ուսուցչի, այլ իր թելադրությամբ: Ինքնաթելադրությունը զարգացնում է աշակերտների հիշողությունը, ուշադրությունը, կամքը, սովորեցնում է կառավարել սեփական մտքերը, գործողությունները, մշակում է հետևողականորեն աշխատելու ունակություն:

Ինքնաթելադրության նյութեր կարելի է ընտրել ինչպես գրավոր նյութերի ժողովածուներից, այնպես էլ մայրենիի դասագրքերից, որոնք նախատեսված են տնային նախապատրաստություն անցնելուց հետո դասարանում գրելու համար:

II. Ստեղծագործական թելադրությունները ուսուցչին և աշակերտներին մղում են լեզվառճական և տրամաբանական աշխատանքների, որոնք նրանք պետք է կատարեն թելադրությունը գրելուն զուգընթաց: Գրավորի այս տեսակը նախատեսված է կիրառել 3-4-րդ դասարաններում: Ստեղծագործական թելադրությունների ժամանակ տրվող հանձնարարությունները երբեմն կարող են այն աստիճանի ձևափոխել թելադրվող նյութը, որ այն կարող է նույնիսկ դառնալ պարզապես փոխադրություն, որի պատճառով էլ հաճախ գրավորի այս տեսակը որոշ մեթոդիստներ, իրավամբ, անվանում են ստեղծագործական:

Ստեղծագործական թելադրությունները բազմազան են, սակայն դրանք կարելի է համակարգել 4 խմբի մեջ **ընտրովի, ազատ, հորինողական, առարկայական՝**:

Փոխադրությունները խոսքի զարգացման միջոց են: Գրավորի այս տեսակը (նախ՝ բանավոր պատմելով, ապա նույնը գրավոր շարադրելով) հարստացնում է աշակերտի խոսքը: Միաժամանակ այս ճանապարհով նա գրողից կարծես թե վերցնում է խոսք կառուցելու դասեր հանդես բերելով ակտիվ նախաձեռնություն:

Որքան էլ որ ունկնդրած նյութի բովանդակությունը փոխադրելիս կարևորվում է աշակերտի ինքնուրույն խոսքը, այնուամենայնիվ, պիտի աշխատանք տանել, որ աշակերտը որոշ հեղինակային բառեր, արտահայտություններ, մտքեր վերարտադրի հարազատ մնալով հեղինակի ոճին և լեզվին: Բնագրի շուրջ տարվող մեթոդապես ճիշտ աշխատանքի միջոցով դրանք կդառնան աշակերտներին՝ անշուշտ ապահովելով ինքնուրույնություն, սերմանելով ստեղծագործական գործունեության տարրեր: Որքան էլ որ փոխադրություն գրելիս տեղ տրվի երեխաների ստեղծագործական մտքին և վերլուծական մտածողությանը, այնուամենայնիվ, աշակերտները պետք է տրված խոսքի նմուշից օգտագործեն այն բառերը, արտահայտությունները, որոնք աշակերտներն հանդիպում են առաջին անգամ, որպեսզի պահպանվեն ստեղծագործության իմաստային առանձնահատկությունները և աշակերտների խոսքը հարստանա դրանցով: Որպեսզի փոխադրության համար ընթերցած նյութի տպավորությունը չխամրի, անհրաժեշտ է չձգձգել փոխադրությանը նախապատրաստող աշխատանքը, և աշակերտներին անմիջապես մղել վերարտադրելու՝ հետամուտ լինելով, որ աշակերտները թափանցեն նյութի ենթաշերտերի մեջ:

Սովորաբար տարրական դասարաններում կիրառվում են փոխադրության հետևյալ տեսակները.

1. բնագրին հարազատ կամ մանրամասն,
2. համառոտ,
3. ընտրովի,
4. ստեղծագործաբար:

¹ Շիրինյան Հ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Դասախոսությունների փաթեթ, Երևան, 2015, էջ 56:

Ուղղագրական հմտությունների ձեռքբերման գործընթացի արդյունավետությունը մեծապես պայմանավորված է սովորողների թույլ տված ուղղագրական սխալների շուրջ տարվող աշխատանքով: Այս աշխատանքն իրականացվում է համադասարանային եղևակով՝ առանց հաշվի առնելու սովորողների ընկալման բազմաբնույթ առանձնահատկությունները: Համադասարանային աշխատանքի ժամանակ ակտիվ գործունեություն են ծավալում առավելապես այն աշակերտները, որոնք ոչ մի սխալ թույլ չեն տալիս կամ թույլ են տալիս սակավաթիվ սխալներ:

Ուղղագրության շուրջ աշխատանքը միտված է այդ ուղղությամբ հմտությունների ձևավորմանը, իսկ հմտություններն ամբողջանում են բազմատեսակ վարժությունների բազմակի կիրառմամբ: Այդ վարժությունների մեծ մասը պիտի իրականացնել սովորողների թույլ տված ուղղագրական սխալների շուրջ: Նման վարժությունների կատարման ժամանակ պիտի նկատի ունենալ, որ տարբեր են ոչ միայն երեխաների ընկալումը, հիշողությունը, ուշադրությունը, այլև դրանցով պայմանավորված յուրաքանչյուր երեխա ունի նյութի յուրացման ժամաքանակի տարբեր պահանջ:

Հաշվի առնելով այս ամենը, ինչպես նաև աշխատանքի գիտակցականության և ակտիվության ապահովման նպատակով սովորողների թույլ տված ուղղագրական սխալների շուրջ աշխատանք տանելիս պիտի մեծ տեղ տալ նրանց ինքնուրույնությանը: Սա նշանակում է, որ առաջին հերթին սխալների բացատրությունն ու շտկումը պիտի աշակերտներն իրականացնեն իրենք: Նրանց ընդամենը պիտի օգնել, որ հիշեն համապատասխան կանոնը, կատարեն բառակազմական վերլուծություն, բացատրեն բառիմաստը և այլն: Այսպիսի աշխատանքի ընթացքում, բնականաբար, կձանձրանան այն աշակերտները, որոնք սխալներ թույլ չեն տվել գրավորի ժամանակ: Ձանձրույթը կանխելու և աշխատանքային ակտիվ մթնոլորտի մեջ նման աշակերտներին ներգրավելու համար շահեկան է նման երեխաներին հանձնարարել ստեղծագործական վարժություններ՝ տարաբնույթ առաջադրանքներով: Օրինակ՝ կարելի է տալ այսպիսիք.

1. Որոշել տրված բառերի արմատները: Յուրաքանչյուր արմատով գրել երկուական նոր բառ:

2. Ամբողջացնել բառաշարքերը միևնույն ուղղագրությանը վերաբերող նոր բառերով:
3. Տրված բառախումբը բաժանել երեք խմբի և գրի առնել համապատասխան սյունակում:

Պատկանում է գ- ք-ի ուղղագրությանը	Պատկանում է օ- ո-ի ուղղագրությանը	Պատկանում է ջ- չ-ի ուղղագրությանը

4. Տրված բառախմբերը բաժանել երեք ենթախմբերի՝ հիմք ընդունելով ուղղագրական ընդհանուր կանոնը:

Մինչ սխալներ թույլ չտված աշակերտները կկատարեն նշված կամ դրանց նման վարժություններ, ուսուցիչը կարող է աշխատանք տանել դասարանի հետ:

Սովորողների թույլ տված սխալների ուղղմանը միտված աշխատանքի իրականացման հնարները.

- ✓ Ինքնաստուգում, ինքնուղղում կամ փոխադարձ շտկում,
- ✓ Որոշել, թե բառի որ մասում է սխալը,
- ✓ Բացատրել բառի ուղղագրությունը,
- ✓ Ասել տվյալ կանոնին վերաբերող նոր բառեր և գրի՝ առնել,
- ✓ Բառերի գրառում բառատետրում:

Գլուխ 2. Ուղղախոսության ուսուցման մեթոդներ. դրանց ընտրությունն ու արդյունավետության աստիճանը

Բանավոր խոսքի զարգացման համակարգում որոշակի տեղ է գրավում գեղեցիկ խոսելու և արտահայտիչ կարողալու հմտությունների մշակումը, որն իրականացվում է ուղղախոսության ուսուցման միջոցով: Ուղղախոսություն հասկացությունը այստեղ գործածում ենք վեղի լայն առումով, դրա տակ ըմբռնելով ոչ միայն ձայնավորների և բաղաձայնների, հնչյունափոխության արտասանական կանոնները, այլև շեշտադրության, ձևաբանության և շարահյուսության հետ կապված արտասանական կանոնների պահպանումը ինչպես խոսելիս, այնպես էլ կարդալիս:

Գրական լեզվի ուղղախոսական նորմաների պահպանումը, համապատասխան կանոնների և օրինաչափությունների ուսուցումը տարվում է մայրենի լեզվի դասավանդման ողջ ընթացքում: Այն սկսվում է առաջին դասարանից, շարունակվում չորրորդից մինչև ութերորդ և ավելի խորացվում ու մշակվում բարձր դասարաններում:

Ուղղախոսության ուսուցումը տարվում է ուղղագրության հետ միաժամանակ: Կանգ առնենք մի քանի կարևոր հարցերի վրա: Նախ՝ ուղղախոսության ուսուցման հարցում կան լուրջ դժվարություններ: Աստիճանաբար նորմավորվում է դրական արտասանությունը, ողղախոսական բառարանների, դիդակտիկ նյութերի և գննական այլ պարագաների խիստ պահանջ է զգացվում: Բացի դրանից, արտաքին մի շարք գործոնների ազդեցությունը, իհարկե, իր դրական կողմերի հետ միաժամանակ, բացասաբար է անդրադառնում ուղղախոսության նորմերի պահպանման վրա:

Նշենք միայն, որ ուղղախոսության ուսուցումը հաջող կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել գրական լեզվի արտասանական միտումները և քարացած չնդունել դասագրքային մի շարք կանոնները: Օրինակ, այժմ արդեն որոշակի է դառել *սկ, սք, սպ, զգ* և նման հնչյունակապակցություններն առան ը-ի արտասանելը: Դա ոչ միայն արտաքին գործոնների ազդեցության հետևանքն է ռուսերենի արտասանական կանոնների ներթափանցում, այլև մայրենի լեզվի ուղղախոսական կանոնների նորմավորման ներքին օրինաչափություն: Հիշյալ

հնչյունակապակցությունների ը-ով արտասանությունը պայմանավորված է մի այլ հանգամանքով ևս: Դրանք իրենց արտասանական որակը փոխում են նախորդ բառի վերջին ձայնավորի կամ ը հոդի ազդեցությամբ, այսպես *«Լուսինեն սպասեց, մինչև որ մայրն ստուգեց ճանապարհը»* նախադասությունը կարդալիս արտասանվածքը բաժանվում է մասերի, այսինքն՝ բառերի առանձին մասեր անջատվում են բուն բառից և միանում հաջորդին, որպես ուղղախոսական կանոն: Եթե այդ նախադասությունը կարդանք ըստ արտասանական կանոնների պահպանման, ապա այն կհնչի հետևյալ կերպ.

Լուսինե նրսպասեց մինչև որ մայր նրստուգեց ճանապարհը:

Նշանակում է, սպասեց և ստուգեց բառերից առաջ ը ձայնավորի արտասանությունը պայմանավորված է ոչ թե *սպ, ստ* և նման տառակապակցությունների հնչյունական առանձնահատկությամբ, այլ նախադասության մեջ բառերի շղթայակցման ուղղախոսական օրինաչափություններով:

Նկատելի է նաև գաղտնավանկի ը ձայնավորի թուլացումը, որն զգալի է հատկապես տողադարձի ժամանակ:

Գրական հայերենի արտասանական կանոնների պահպանման համար պետք է հաշվի առնել նաև ձայնավորների և երկհնչյունների ուղղախոսական կանոնները: Առանձնապես ուշադրություն պետք է դարձնել է, ո ձայնավորների արտասանությանը այն բարդությունների մեջ, որոնց երկրորդ բաղադրիչը սկսվում է այդ հնչյուններով: Հաշվի առնելով այդ ձայնավորների ուղղախոսական առանձնահատկությունները՝ նպատակահարմար է դրանց ուսուցումը տանել հակադրության միջոցով: Ուսուցիչը ցույց է տալիս համապատասխան աղյուսակ և պահանջում ուսումնասիրել և համեմատել, թե ե կամ ո ձայնավորներին ինչ հնչյուններ են նախորդում, ինչու է մի դեպքում արտասանվում է, օ իսկ մյուսում՝ ե(յե), ո(վօ): Այսպես, համեմատելով *ձկնորս, թռչնորս և արջատրս, աղվեսատրս* շարքերը՝ աշակերտները գալիս են համապատասխան եզրակացության, իսկ հետագա վարժությունները կատարվում են նման բառերը կարդալու և արտասանելու շուրջ: Երկհնչյունների մեջ թուլացել է յ-ի արտասանությունը, իսկ մի շարք բառերում յ-ն գրեթե չի արտասանվում:

Փորձը ցույց է տալիս, որ աշակերտները ուղղախոսական սխալներ են թույլ տալիս *ույ* երկհնչյուն ունեցող բառերն արտասանելիս, ինչպես՝ **լույսավոր, թույնավոր, համբույրել**: Նպատակահարմար է *ույ* երկհնչյունի ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տանել պրոբլեմային եղանակով, քանի որ դասագրքում այդ մասին տրված է թերի բացատրություն:

Պրոբլեմային իրադրություն ստեղծելու նպատակով ուսուցիչն աշակերտներին թելադրում է **գրուցակից, բուժօգնություն, հարցագրույց, ակնաբույժ** բառերը և նրանց ուշադրությունը հրավիրում դրանց վրա և պահանջում գտնել սխալ գրվածը, ուղղել և արտասանել: Աշակերտների մեծ մասը, հիշելով և հիմք ընդունելով տարրական դասարաններում բառակազմությունից, չորրորդ դասարանում հնչյունափոխությունից, ստացած գիտելիքները և սեփական կենսափորձը, գտնում է, որ ճիշտ չեն գրված **գրույցակից, բույժօգնություն** բառերը, որ դրանք պետք է գրել **գրուցակից** և **բուժօգնություն**: Աշակերտներից մի քանիսն էլ պնդում են, որ սխալ է գրված նաև **ակնաբույժ** բառը, այն պետք է գրել **ակնաբուժ**, պատճառաբանելով, որ հնչյունափոխություն է տեղի ունեցել կամ *յ*-ն ընկել, սղվել է:

Ակնհայտ են տարբեր կարծիքներն ու թերի հիմնավորումները: Ուսուցիչը ցույց է տալիս վերոգրյալ բառերի ճիշտ գրությունը և առանց մեկնաբանելու հաստատում, որ իրոք, տեղի է ունեցել հնչյունափոխություն, *ույ* երկհնչյունը վերածվել է *ու* հնչյունի, իսկ թե ինչպե՞ս, ասում են աշակերտները: Դրանից հետո տրվում է առաջադրանք.

1. Գտնել կամ ընտրել *ույ* երկհնչյուն ունեցող բառեր կամ բառարմատներ **բույժ, գրույց, հույս, լույս** բառերի նմանությամբ:
2. Դրանցով կազմել բառաբարդումներ ու ածանցումներ այնպես, որ այդ բաղադրիչներն ընկնեն նախ՝ բարդության սկզբում, ապա՝ վերջում:
3. Այնուհետև ուշադիր հետևել, համեմատել բառերի առաջին ու վերջին մասերը և ասել, թե ինչ փոփոխություն է կրել *ույ* երկհնչյունը:

Աշակերտներն անցնում են առաջադրանքի կատարմանը: Նախ թվարկում են *ույ* երկհնչյուն ունեցող բառեր, ինչպես՝ **բույս, բույր, ծույլ, թույն, գույգ, ցույց** և այլն, ապա կատարում են երկրորդ առաջադրանքը.

բույս- բուսաբանություն, բուսական, բուսահող.

հացաբույսեր, դեղաբույսեր, անբույս:

բույր- բուրավետ, բուրմունք, բուրումնալիս.

անուշաբույր, քնքշաբույր, ծաղկաբույր:

ցույց- ցուցակ, ցուցամուկ, ցուցարար.

օրացույց, հեռուստացույց, կողմնացույց և այլն:

Առաջադրանքի կատարումից հետո, համեմատելով նույն արմատով բարդված կամ ածանցված շարքերն առանձին-առանձին, աշակերտները նկատում են որոշ օրինաչափություններ: Այսպես՝ երբ բառն ընկած է բարդության կամ ածանցման վերջում, **ույ** երկհնչյունը մնացել է անփոփոխ, այսինքն՝ չի հնչյունափոխվել, իսկ երբ ընկած է բարդության սկզբում, **ույ**–ը դարձել է **ու** հնչյուն:

Ուսուցման հաջորդ փուլում աշակերտներին տրվում է լեզվական համապատասխան նյութ, ասենք՝ **հույս, լույս, թույն, ծույլ, գրույց, գույգ, խույզ, խույս** և այլն, բացատրվում անձանոթ բառերի իմաստը և առաջադրվում կազմել աղյուսակ ըստ վերը բացահայտված օրինաչափությունների:

Դժվար չէ նկատել, որ ուսուցման նման եղանակն ավելի արդյունավետ է, բարձրացնում է աշակերտների ինքնուրույնությունն ու ստեղծագործական ակտիվությունը: Ըստ էության աշակերտներին տրվում են ոչ թե պատրաստի գիտելիքներ ու սահմանումներ, այլ տրվում է նյութ, որի հիման վրա իրենք են ձևակերպում սահմանումները և համակարգում սովորածը: Նույն եղանակով կարելի է ուսուցանել նաև մյուս երկհնչյունները:

Անհամեմատ, ավելի մեծ դժվարություններ պետք է հաղթահարել բաղաձայնների ուղղախոսությունն ուսուցանելիս, որովհետև դեռևս լրիվ կերպով չի սահմանված բաղաձայնների արտասանությունը: Այստեղ էլ նկատելի է գրային արտասանության միտումը: Բաղաձայնների ուսուցման հիմքը դրվում է հնչյունաբանությունն անցնելիս:

Լուրջ ուշադրություն պետք է դարձնել բաղաձայնների որակի, նրանց համակարգի՝ եռաշարք, երկշարք, միաշարք, բացատրությանը: Ձևական պարագաներով ուսուցիչը ցույց է տալիս, որ բաղաձայնների համակարգում եռաշարքի՝ **պ, կ, տ, ծ, ճ** թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում պահպանում են իրենց հնչումը:

Մեր լեզվում սովորական չեն հնչյունների այնպիսի կապակցությունները, երբ երկու ձայնեղ իրար մոտ են ընկնում: Նման դեպքում ձայնեղներից մեկը ազդում է մյուսի վրա և փոխում արտասանությունը: Օրինակ՝ *Բարզեն* բառի մեջ դժվար է *բգ*-ն հնչել այնպես, ինչպես գրվում է, ուստի ձայնեղ *բ* -ն ազդում է ձայնեղ *գ*-ի վրա և առնմանության պատճառով *գ*-ն փոխում է իր արտասանական որակը՝ դառնալով պայթական:

Դասավանդման ընթացքում հարմար առիթներով ուսուցիչը աշակերտների ուշադրությունը բևեռում է նմանհնչյուն բառերի արտասանությանը և զգուշացնում, որ *դուռ-դուր, սեռ-սեր, համառ-համար* և նման բառերում գրային արտասանությունը խիստ պարտադիր է, հակառակ դեպքում բառիմաստը ճիշտ չի ընկալվի: Նման դեպքեր կան նաև նույնանուն բառերի շարքում: Միայն արտասանության ժամանակ և կարդալու ընթացքում են նկատվում իմաստատարներիչ հատկանիշները:

Խոսքի մասերն ուսուցանելիս ուշադրություն պետք է դարձնել ոչ միայն քերականական տվյալ կարգի արտասանական որոշ առանձնահատկություններին, այլև կրկնել հնչյունաբանությունից, ուղղագրությունից և ուղղախոսությունից սովորած դեպքերը: Օրինակ, գոյականի թիվն անցնելիս ոչ միայն պետք է տալ ուղղագրական և ուղղախոսական արժեք ունեցող *աստղ, արկղ, դուստր, սանր, վագր* և այլ գոյականները, այլև աշակերտների ուշադրությունը հրավիրել բառերի արտասանությանը, իբրև գոյականների:

Ուսուցիչը պետք է իմանա, որ գրական լեզվի զարգացման և կատարելագործման հետ անընդհատ փոփոխվում է նաև արտասանությունը, երևան է գալիս ուղղախոսական նոր պահանջներ, որոնք դեռևս չեն կայունացել, ուստի վերը նշված բոլոր բառերի արտասանությունը պետք է թողնել ազատ: Դասավանդման ընթացքում պետք է պայքարել ուղղախոսական նորմաների ու կանոնների խախտման դեմ, որովհետև ուղղախոսությունը մշակում է խոսքի կուլտուրան՝ հմտանալով գեղցիկ խոսելու և արտահայտիչ կարդալու արվեստում:

Տարրական դասարաններում մեթոդների և միջոցների ճիշտ ընտրությամբ կարելի է ուսուցանել ուղղագրական և ուղղախոսական ցանկացած նյութ: Ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մեթոդները կնպաստեն ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների և կարողությունների ձևավորմանը և զարգացմանը:

Ուսումնասիրենք տարրական դասարաններում ուսուցանվող մի քանի ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների ուսուցման դասերի օրինակներ:

2.1 Օրինակելի դասերի նմուշներ

Դասարան՝ _____ II _____

Դասի թեման՝ Պատմվածքն ընթերցող էր փնտրում¹

Դասի տիպը՝ Նոր նյութի յուրացման դաս

Դասի նպատակը՝

- կիրանան օ և Ֆ տառերի ստեղծման մասին,
- կտվորեն օ-ի գրության և արտասանության կանոնը,
- կզարգանա վարժ, սահուն, արտահայտիչ կարդալու կարողությունները,
- կհարստացնեն բառապաշարը,
- կձևավորվի շատ կարդալու, գիտելիքները հարստացնելու և բանիմաց լինելու ցանկություն:

Դասի կահավորումը՝ տառերի պատկերներ քարտերով, գունավոր կավիճներ, բառատետր, դասագիրք:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգվում է նախորդ դասին հանձնարարված տնային հանձնարարությունները և գնահատվում:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Աշակերտները վերհիշում են ձայնավոր հնչյունները: Դասընթացի այս փուլում գրատախտակին կգրվեն հայերենի մի քանի տառեր, ապա աշակերտներից մի քանիսի օգնությամբ դուրս կբերվեն ձայնավոր հնչյունները:

Ուսուցիչը հակիրճ կներկայացնի, որ օ և Ֆ տառերը սկզբում չեն եղել, դրանք հայոց այբուբեն են մտել հետագայում:

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, ՄԱՆՄԱԸ, 2010, էջ 8:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Ուսուցչի կողմից կրնթեցվի դասը, ապա այն կրնթերցեն մի քանի աշակերտներ: Տեքստից դուրս կբերվեն և կբացատրվեն անձանոթ բառերը, կգրվեն բառատետրերում: Ապա ևս երկու անգամ դասը կրնթերցեն դերերով և կփորձեն ինքնուրույն բացատրել դասի իմաստը, որ բանիմաց և խելացի մարդու համար տեղը և ժամանակը նշանակություն չունի:

Ընդօրինակման արտագրություն

Աշակերտներին կտրվի հանձնարարություն տեքստից դուրս գրել այն բառերը, որոնցում կան *o* և *n* տառերը:

Հանձնարարությունն ավարտելուց հետո դուրս գրված բառերը կրնթերցեն բարձրաձայն: Օրինակ՝ ընթերցող, այսօր, խորամանկ և այլն: Օրինակների հիման վրա ուսուցչի կողմից կբացատրվի և կպարզաբանվի.

- ✓ *o* տառը բառամիջում գրվում է *o*, եթե այն վերլուծելիս հնարավոր է լինում գործածել ինքնուրույն, իսկ եթե ոչ, ապա գրվում է *n*,

կամ

- ✓ երբ բառի մեջ կամ բառի վերջում լսում ենք *o* հնչյունը, գրում ենք *n* տառը, բացի հատուկ դեպքերից:

Աշակերտները սերտում են այս կանոնը և կիրառում հետագայում:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Քարտային աշխատանք

Աշակերտները կստանան քարտեր և հանձնարարություն՝ Լրացնել բաց թողնված տառերը: Քարտերի վրա գրված կլինեն *o*-ի և *n*-ի ուղղագրությամբ բառեր, յուրաքանչյուրում՝ երեքական: Կտրվի երեք բառ, որից հետո, աշակերտները կկարդան՝ ստուգելով ինչպես ուղղախոսական, այնպես էլ ուղղագրական սխալները:

Դասի ավարտին կհանձնարարվի տնային աշխատանք՝ սահուն և վարժ ընթերցել դասը, կատարել առաջադրանք 4-ը¹:

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, ՍՄՆՄԱԸ», 2010, էջ 8:

Դասարան՝ _____ II _____

Դասի թեման՝ Անտեսանելի գլխարկ՝ տառերից մեկի գլխին¹

Դասի տիպը՝ Նոր նյութի յուրացման դաս

Դասի նպատակը՝

- կվերհիշեն վանկատումը,
- կիմանան գաղտնավանկի ը-ի մասին,
- կսովորեն ը-ի գրության կանոնները,
- կզարգանա վարժ, սահուն, արտահայտիչ կարդալու կարողությունները,
- կհարստացնեն բառապաշարը,
- կսահմանեն ը-ի գրության կանոններից՝ ելնելով դասանյութից:

Դասի կահավորումը՝ ը տառի և վանկերի պատկերները քարտով, մագնիս, բառատետր, դասագիրք:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգվում է նախորդ դասին հանձնարարված տնային հանձնարարությունները և գնահատվում:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Փոփկոռն

Գրատախտակի մոտ կդրվեն վանկերի քարտերը: Աշակերտները արագ-արագ կկազմեն բառեր, որոնք կդասավորվեն և մագնիսի միջոցով կփակցվեն գրատախտակին: Ապա աշակերտներից մի քանիսը կկարդան ստացված բառերը և նորից կվանկատեն:

Օրինակ՝



ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան,» ՄԱՆՄԱԸ», 2010, էջ 17:

Ուսուցչի կողմից կրնթերցվի դասը, ապա կրնթերցեն նաև աշակերտները, ապա կվանկատեն դասում առանձնացված բառերը՝ ուշադրությունը սևեռելով գաղտնավանկի ը-ի վրա: Ընթերցելուց հետո կբացատրվեն նորածանոթ բառերը և կգրվեն գրատախտակին:

Խմբային աշխատանք

Դասարանը կբաժանվի խմբերի՝ ըստ շարքերի: Յուրաքանչյուր շարքից մեկական աշակերտ կմոտենա գրատախտակին և ուսուցչի կողմից թելադրված բառերը կգրվեն գրատախտակին՝ վակատելով: Օրինակ՝ գըլ-խարկ, մըկ-բատ, ար-կըղ, լը-սել, ընկեր և այլն: Ինչպես նկատեցինք, բառերը վերաբերում են ը հնչյունի գրությանը և արտասանությանը:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Աշակերտները կսահմանեն ը-ի գրության և արտասանության դեպքերը.

- ✓ բառասկզբում և բառավերջում լսվում է ը, գրվում է ը,
- ✓ բառամիջում լսվում, բայց գրվում է վանկատման ժամանակ:

Դասի ավարտին կհանձնարարվի տնային աշխատանք՝ սահուն և վարժ ընթերցել դասը, կատարել առաջադրանք 4-ը¹:

Դասարան՝ _____ III _____

Դասի թեման՝ Նշանավոր ոչինչը²

Դասի տիպը՝ Ամրապնդման դաս

Դասի նպատակը՝

- կվերհիշեն գոյականի մասին ունեցած գիտելիքները,
- կամրապնդեն հատուկ և հասարակ գոյականների մասին ունեցած գիտելիքները,

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ», 2010, էջ 17:

² Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2009, էջ 72:

- կտվորեն հատուկ և հասարակ գոյականների տարբերությունները և նամանությունները,
- կգարգանա վարժ, սահուն, արտահայտիչ կարդալու կարողությունները,
- կհարստացնեն բառապաշարը:

Դասի կահավորումը՝ բառատետր, տետր, դասագիրք, արկղիկներ, պատկերներ անվանումներով :

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգվում է նախորդ դասին հանձնարարված տնային հանձնարարությունները և գնահատվում:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Խմբավորում

Սեղանի վրա կդրվեն երկու արկղիկներ, որոնց վրա գրված կլինեն հատուկ գոյականներ և հասարակ գոյականներ: Սեղանին դրված կլինեն նաև տարբեր պատկերներ, իրենց անվանումներով(կենդանի, ծաղիկ, մարդ, լիճ, սար, բանաստեղծ և այլն): Աշակերտները կմոտենան և շրջված նկարներից ընտրելով մեկը կորոշեն, թե որ արկղիկում պետք է լինի պատկերը:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Աշակերտները կընթերցեն դասը, ապա կստանան հանձնարարություն. դուրս գրել այն գոյականները, որոնք ընթերցելիս պատկերացնում են ինչ որ մեկին: Օրինակ՝ քաղաքապետ, գյուղապետ, նահանգապետ և այլն:


Ուսուցողական թելադրություն

Աշակերտները կկենտրոնան հատուկ և հասարակ գոյականները ուղղագրությանը:

Թելադրությունը կպարունակի երեքից չորս նախադասություն:

ԿՇՌԱԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Այս փուլում Վենի դիագրամի միջոցով աշակերտները կփորձեն նկարագրել հատուկ և հասարակ գոյականների նմանությունները և տարբերությունները: Այն կունենա նմանատիպ տեսք.



Դասի ավարտին կհանձնարարվի տնային աշխատանք՝ սահուն և վարժ ընթերցել դասը, կատարել առաջադրանք 3-ը¹:

Դասարան՝ _____ IV _____

Դասի թեման՝ Սեխի թուփն ու ընկուզենին

Դասի տիպը՝ Նոր նյութի յուրացման դաս

Դասի նպատակը՝

- կվերհիշեն բայի մասին ունեցած գիտելիքները,
- կամրապնդեն գիտելիքները օժանդակ բայերի մասին,
- կկազմեն գաղափար օժանդակ բայերի դրական և ժխտական ձևերի մասին,
- կզարգանա վարժ, սահուն, արտահայտիչ կարողալու կարողությունները,
- կհարստացնեն բառապաշարը՝ հոմանիշներով և հականիշներով,
- կձևավորվի համեստության և պարծենկոտության գաղափարը:

Դասի կահավորումը՝ բառատետր, տետր, դասագիրք, ընկուզենու և սեխի նկարներ:

¹ Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Երևան, Մակմիլան-Արմենիա», 2009, էջ 126:

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

Ստուգվում է նախորդ դասին հանձնարարված տնային հանձնարարությունները և գնահատվում:

ԽԹԱՆՄԱՆ ՓՈՒԼ

Հնգյակ

Գրատախտակին գրվում է ընկուզենի բառը: Աշակերտները ստանում են հանձնարարություն.

1. Ենթարկի՛ր բառակազմական վերլուծության:

Պատասխան. ընկուզենի – ընկույզ + ենի

2. Ածանցով կազմի՛ր նոր բառեր:

Օրինակ՝ խնձորենի, դեղձենի, թզենի և այլն:

3. Կազմի՛ր բառակապակցություն բառի արմատով:

Օրինակ՝ պինդ ընկույզ, համեղ ընկույզ և այլն:

4. Կազմի՛ր նախադասություն ընկուզենի բառով:

Օրինակ՝ Դարավոր ընկուզենին շարունակում էր առատ բերք տալ:

5. Դուրս գրի՛ր կազմածո նախադասության ենթական և ստորոգյալը:

Ի՞նչը՝ ընկուզենին, ի՞նչ էր անում՝ շարունակում էր:

ԻՄԱՍՏԻ ԸՆԿԱԼՄԱՆ ՓՈՒԼ

Դասընթացի այս փուլում աշակերտները կընթերցեն դասը, դուրս կբերեն անձանոթ բառերը, կհարստացնեն գիտելիքները հոմանիշներով, հականիշներով և դարձվածքներով: Ապա կվերարտադրեն տեքստի բովանդակությունը և կվերլուծեն հիմնական իմաստը՝ համեմատելով սեխին և ընկուզենուն մարդկանց հետ:

Այս ամենը կատարելուց հետո աշակերտները կստանան առաջադրանք, դուրս գրել բայերը՝ ընդգծելով օժանդակները: Ուսուցչի օգնությամբ կվերհիշեն օժանդակ բայերի ուղղագրական և ուղղախոսական կանոնները և կսերտեն նոր դասը օժանդակ բայերի ձևերի մասին:

ԿՇՈՒՄԴԱՏՄԱՆ ՓՈՒԼ

T-աձև աղյուսակ

Աշակերտները կկազմեն սեխի թփի և ընկուզենու տարբերությունները՝ տալով նրանց բնութագրերը.



պարծենկոտ ծաղրող գոռոզամիտ անցողիկ	խոնարհ համեստ ողջախոհ կանգուն
---	--

Աշակերտները կկատարեն եզրահանգում՝ «Շատ պարծեցողը շուտ ցած կընկնի»:

Դասի ավարտին կհանձնարարվի տնային աշխատանք՝ սահուն և վարժ ընթերցել դասը, կատարել առաջադրանք 1-ը, 2-ը¹:

¹ Մարգարյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., «Մայրենի 3», Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2009, էջ 126:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուղղագրությունը լեզվի համար հանրության կողմից ընդունված, պաշտոնական ճանաչում գտած գրության կանոնների համակարգն է:

Ուղղախոսությունը ճիշտ խոսելու, ճիշտ կարդալու կանոնների ամբողջությունն է:

Այս երկու հիմնական կանոնները նկատի ունենալով տարրական դասարաններում դավանդող ցանկացած ուսուցիչ պարտավոր է ուսուցանել և հետևողական աշխատանք տանել աշակերտների ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեթոդիկային:

Տարրական դպրոցում ուսուցանվող ցանկացած դաս իր մեջ պետք է ներառի հետևյալ ուղղագրական և ուղղախոսական ձևերից և մեթոդներից (հնարավոր է նաև դրանց միաժամանկյա գործածումը).

- ընդօրինակման մեթոդ,
- հնչյունային մեթոդ,
- կանոնարկման մեթոդ:

Տարրական դասարանների դասընթացում ուսումնասիրվում և ուսուցանվում են ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների մի ամբողջ համակարգ:

1. Ձայնավորների ուղղագրություն և ուղղախոսություն:
2. Բաղաձայնների ուղղագրություն և ուղղախոսություն:
3. Երկհնչյունների ուղղագրություն և ուղղախոսություն:
4. Քերականական ուղղագրություն:

Տարրական դասարաններում ուսուցանվող ցանկացած դաս իր մեջ կարող է ներառել ուղղագրական և ուղղախոսական գիտելիքների ուսուցում և ամրապնդում, այդ իսկ պատճառով, մեր կողմից ուսումնասիրվել և առաջարկվել են ուսուցման որոշակի մեթոդիկա՝ չմոռանալով, որ ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը չի կարելի տարանջատել միմյանցից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուրջինյան Դ., Հեքեքյան Ն., «Մայրենի 4», Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրք, Երևան, «Էդիթ Պրինտ», 2010, 192 էջ:
2. Խաչատրյան Ս. Գ., Ուղղագրության և ուղղախոսության ուսուցումը տարրական դասարաններում, Գյումրի, 2002թ., 108 էջ:
3. Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը տարրական դասարաններում, Գյումրի, 2006, 96 էջ:
4. Ղարիբյան Ա., Ամիրյան Ա., Սարգսյան Ա. Բաղրամյան Ռ., Հայոց լեզվի մեթոդիկա, «Հայպետ» հրատ., Երևան, 1955, 387 էջ:
5. Մանուկյան Ա. Ս., Խոսքի զարգացման մեթոդիկա, (IV-VIII դաս. ուսուցիչների համար, «Լույս», Երևան, 1976, 346 էջ:
6. Շիրինյան Հ., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Դասախոսությունների փաթեթ, Երևան, 2015, 101 էջ:
7. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ., «Մայրենի 2», Հանրակրթական դպրոցի 2-րդ դաս. դասագիրք, Երևան, «ՄԱՆՄԱՐ», 2010, 160 էջ:
8. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Զիլավյան Ե., «Մայրենի 3», Հանրակրթական դպրոցի 3-րդ դաս. դասագիրք, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2009, 160 էջ:
9. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Չիբուխյան Կ., «Մայրենի 4», Հանրակրթական դպրոցի 4-րդ դաս. դասագիրք, Երևան, «Մակմիլան-Արմենիա», 2009, 176 էջ:
10. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 564 էջ:
11. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, ԿԱԻ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008, էջ 105: